2017, 25 դեկտեմբերի, ներկայացվել է <<Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան>> Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի քննարկմանը

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2017թ. ՀՊՄՀ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման

Ծրագրի իրավական հիմքերը և ընդհանուր նկարագիրը. Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը (այսուհետ՝ Համալսարան) հաշվետու ժամանակաշրջանում իրականացրել է բուհի առաքելությունից, զարգացման ծրագրերից, բնութագրերից և հեռապատկերից բխող հակակոռուպցիոն Ծրագիր (այսուհետ՝ Հակակորուպցիոն ծրագիր կամ Ծրագիր):

Ծրագրի իրականացման իրավական հիմքերն են ՀՀ սահմանադրությունը, ՀՀ օրենքները, ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի <<Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2015-2018 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին>> N1141-Ն որոշումը, այլ իրավական ակտերը, ներառյալ՝ Համալսարանի կանոնադրությունը և ռազմավարական ծրագիրը, ՀՊՄՀ 2017թ. հակակոռուպցիոն ռազմավարության Ծրագիրը[1]: Ռեկտորի հրամանով ստեղծվել և գործում է Համալսարանի ռեկտորին առընթեր հակակոռուպցիոն ռազմավարության ծրագիրն իրականացնող հանձնաժողով:

Ծրագիրը կազմելիս և իրականացնելիս հստակ որոշվել են՝

1. ***Նպատակները***՝

1.1. կոռուպցիոն ռիսկերի էական կրճատմամբ հնարավոր կոռուպցիոն երևույթների կամ առանձին փաստերի նշանակալիորեն սահմանափակումը,

1.2. բարձրացնել Համալսարանում մատուցվող հանրային ծառայությունների որակը,

1.3. զգալիորեն բարելավել սոցիալական արդարության ընկալումը,

1.4. ամրապնդել բուհի մրցունակությունը և գրավչությունը ներդրումների համար կրթության և գիտության ոլորտների ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկայում:

2. ***հիմնական խնդիրները***՝

- կառավարման համակարգի կատարելագործումը և այդ համակարգի արդյունավետության բարձրացումը,
- կառավարման գործընթացում կառույցների ղեկավարների և աշխատակիցների անձնական պատասխանատվության բարձրացումը,
- դինամիկ զարգացմանը զուգընթաց կառավարման կառուցվածքային համակարգի բարեփոխումները,
- Համալսարանի գործունեության տարբեր ուղղություններում կառավարման էլեկտրոնային համակարգի ներդնումը,

[1] Տես՝ ՀՊՄՀ 2017թ. հակակոռուպցիոն ռազմավարության Ծրագիր (նպատակները, խնդիրները, իրագործման ուղղությունները և ուղիները) https://aspu.am/website/images/files/2016-Cragir-hakakorupcion.pdf:

- գիտակրթական կառույցների, ՎԱ և ՊԴԱ գործունեության վերաբերյալ Համալսարանի աշխատակիցների, ուսանողների և հանրության պատշաճ իրազեկվածությունը,

- կառավարման և գիտակրթական գործընթացներում նոր մեթոդների ներդրումը, որոնք ապահովում են գործունեության առավել հստակությունը, կանխատեսելիությունը և թափանցիկությունը,

- ֆինանսական և նյութատեխնիկական միջոցների կառավարման կատարելագործումը,

- բոլոր մակարդակներում և յուրաքանչյուր օղակում, ներառյալ՝ ինքնակառավարվող մարմիններում հակակոռուպցիոն քաղաքականության իրականացմանը աջակցությունը,

*3. **Արտաքին և ներքին գործոնները*** /բուհի ֆինանսական կայունությունը, ընդունված զարգացման ծրագրերի հաջող իրականացումը, Համալսարանում մատուցվող հանրային ծառայությունների որակի շեշտակի բարելավումը, սոցիալական արդարության ընկալման բարելավումը, կրթության և գիտության ոլորտների ներքին և արտաքին շուկայում բուհի մրցունակության և գրավչության ամրապնդումը/:

*4. **Ծրագրի հիմնական ուղղությունները***՝ կրթական և ուսումնական գործունեությունը, ՊԴԱ և ՎԱ վերապատրաստումները, դիմորդների (բակալավրիատ, մագիստրատուրա, ասպիրանտուրա) հավաքագրումը և ընդունելությունը, գիտական գործունեությունը, միջազգային համագործակցությունը, ֆինանսների կառավարումը, ներառյալ՝ նյութատեխնիկական բազայի ամրապնդումը և Համալսարանի ենթակառուցվածքների բարելավումը:

*5. **Ծրագրի իրականացման հիմնական մեթոդները*** համալսարանի կառավարման թափանցիկության, հրապարակայնության, հաշվետվողականության և օրինականության ամրապնդման եղանակներով կոռուպցիոն ռիսկերի շարունակական ուսումնասիրությունը, բացահայտումը և կանխարգելումը:

Ծրագրի իրականացման մասնակիցներն են՝ ՀՊՄՀ հոգաբարձուների խորհուրդը, ռեկտորը, վարչական անձնակազմը /պրոռեկտորներ, դեկաններ, ստորաբաժանումների ղեկավարներ/, ուսանողական խորհուրդը, արհմիութենական կազմակերպությունը: Գործողությունների գերակշռող մասին էլեկտրոնային կառավարման համակարգի պարտադիր կիրառման եղանակով մասնակցում եմ ՊԴԱ և ուսանողները:

Գործողություններ 2017թ. ընթացքում.

Նպատակ 1. *Կոռուպցիոն ռիսկերի էական կրճատմամբ նշանակալիորեն սահմանափակել դրա տարածվածության աստիճանը՝ ա/ կոռուպցիոն ռիսկերի նվազեցման ուղիների որոնում, բ/ կոռուպցիոն երևույթների բացահայտում սոցիոլոգիական հարցումների, նպատակային հետազոտությունների անցկացման միջոցով:*

1.1. Իրականացվել է Համալսարանի 2016-2020թ.թ. զարգացման ռազմավարական ծրագրով[2] նախատեսված 2017թ. գործողությունների կատարման պլանը[3], վերանայվել և համապատասխանեցվել են այդ Ծրագրին Համալսարանի ֆակուլտետների և ամբիոնների ռազմավարությունները: Այդ փաստաթղթերը քննարկվել են Համալսարանի կառավարման համապատասխան և վերադաս մակարդակներում: Դրանք միտված են Համալսարանի

2 Տես՝ https://www.aspu.am/website/images/website/docs/Razmavarakan%20cragir.pdf

3 Տես՝ https://www.aspu.am/website/images/website/docs/GP.pdf

ենթակառուցվածքների զարգացմանը, կառավարման համակարգի օպտիմալացմանը, գործունեությունում օրինականության ապահովմանը, կրթական գործունեության արդիականացմանը, գիտական և նորարարական գործունեության զարգացմանը, Համալսարանում իրականացվող մտավոր գործունեության արդյունքների փոխանցմանը և առաջավոր կրթական պրակտիկաների տարածմանը, Համալսարանի կադրային ներուժի զարգացմանը, Համալսարանի սոցիալական համագործակցության զարգացմանը, միջազգային համագործակցությունը արտաքին և ներքին շուկայի պահանջներին շարունակաբար համապատասխանեցմանը:

1.2. Ներդրվել են կոռուպցիոն ռիսկերը զգալիորեն նվազեցնող կառուցակարգեր՝

1.2.1. Նախապատրաստվել են կառուցվածքային ստորաբաժանումների բոլոր աշխատատեղերի պաշտոնների անձնագրերը և պաշտոն չհամարվող աշխատատեղերի աշխատանքային նկարագրերը, որոնք բխում եմ այդ ստորաբաժանումների կանոնադրական դրույթներից, մշակվել են նոր կամ վերակազմակերպված կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունների նախագծերը՝ ըստ իրավասության գիտխորհրդի կամ ռեկտորի հաստատմանը ներկայացնելու համար[4],

1.2.2. փորձարկվել և ամբողջությամբ կիրառվում է 2016 թվականին մշակված և ներդրված համալսարանի ֆակուլտետի, ամբիոնի, ՊԴԱ մասնագիտական գործունեության վարկանիշային գնահատման կարգը[5],

1.2.3. կիրառվել են, ֆակուլտետի դեկանի, ամբիոնի վարիչի ընտրության կարգերը, ՊԴԱ ձևավորման կանոնակարգը և մի շարք այլ փաստաթղթեր, որոնք սահմանում են կոռուպցիոն ռիսկերը զգալիորեն նվազեցնող կառուցակարգեր[6]:

1.2.4. Աշխատավարձի մակարդակը 2017թ. ընթացքում մնացել է կայուն 2015թ. և 2016թ. համեմատությամբ:

1.2.5. Օպտիմալացման նպատակով իրականացվել են առանձին ամբիոնների կառուցվածքային բարեփոխումներ: Բացի այդ, թափանցիկության, հաշվետվողականության և վերահսկողության ամրապնդման նպատակներով վարչական կառուցվածքում կատարվել են առանձին փոփոխություններ: Այսպես, երկու ամբիոնների միավորման արդյունքում ստեղծվել է Տնտեսագիտության և կառավարման ամբիոնը, երկու վարչությունների միավորման արդյունքում ստեղծվել է Կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչությունը:

1.3. Հաշվապահությունում և Անձնակազմի կառավարման բաժնում հաջողությամբ կիրառվում է ՀԾ համակարգը, ինչն ապահովում է կադրային ռեսուրսների և հաշվապահության էլեկտրոնային մշակումը միջազգային ստանդարտներին համապատասխանող միջավայրում:

Նպատակ 2. *Բարձրացնել Համալսարանում մատուցվող հանրային ծառայությունների որակը, ապահովելով՝ ա/ ուսանողների գիտելիքների գնահատման թափանցիկությունը, գնահատման ընթացակարգերի վերաբերյալ ուսանողների իրազեկվածությունը, բ/ Ֆակուլտետի գործունեության հրապարակայնացումը և վերահսկողության բարձրացումը՝ որպես կոռուպցիայի դեմ պայքարի միջոց:*

---

[4] Դեռևս չհրապարակված նյութերը տես՝ իրավաբանական կենտրոնում և անձնակազմի կառավարման բաժնում:

[5] https://aspu.am/website/images/website/content/varkanish_AGPU.pdf

[6] Տես՝ https://aspu.am/hy/page/hpmh_iravakan_akter/

2.1. Շարունակվում է կրթական չափորոշիչների, ուսումնական պլանների, ուսումնական ծրագրերի, ժամանակացույցերի, քննական հարցաշարերի և այլ անհրաժեշտ տեղեկատվության մատչելությունն ապահովող 2014-2015թթ. ներդրված CiFile համակարգի կիրառումը:

2.2. Գիտակրթական գործունեության կազմակերպումն ու իրականացումը էլեկտրոնային տեխնոլոգիաների կիրառմամբ, էլեկտրոնային դասավանդման և գիտելիքների գնահատման էլեկտրոնային միջոցները նպաստում են ուսումնական գործընթացներում կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը:Ամբողջ ծավալով 7/24 սկզբունքով կիրառվում է դեռևս 2016 թվականից ներդրված բակալավրական և մագիստրոսական կրթության համակարգում բաց և մատչելի միջազգայնորեն ընդունված Google Classroom համակարգը:

Այդ համակարգով իրականացվում են սոցիոլոգիական հարցումներ և նպատակային հետազոտություններ:

2.3. 2017թ. ընթացքում բոլոր ֆակուլտետներում ավարտական ամփոփիչ քննությունները կանցկացվեն գնահատման էլեկտրոնային միջոցների կիրառմամբ[7], որը փորձարկվել է 2016թ. ընթացքում:

2.4. Շարունակական բնույթ է կրում ՊԴԱ և ուսանողներին ապահովվում է էլեկտրոնային գրականությունից օգտվելու լայն հնարավորության ապահովումը: Շարունակվում է համակարգչային և այլ տեխնոլոգիաների տեխնիկական վերազինումը, ստեղծվել են համակարգչային նոր լսարաններ, գրադարանի ընթերցասրահները հագեցվել են նոր տեխնոլոգիաներով, այդ գործընթացը շարունակվելու է նաև 2018թ: Այդ մեխանիզմները նվազեցնում են գրականության «բաժանման» և դասախոս-ուսանող կոռուպցիոն ռիսկերը:

2.5. Շարունակվում է դեռևս 2013թ. սեփական ուժերով և միջոցներով իրականացված և ներդրված էլեկտրոնային դեկանատի պորտալների կիրառումը, ինչն ապահովում է էլեկտրոնային կառավարումը ամբիոն - ֆակուլտետ – ուսումնական վարչություն տարածքում: Էլեկտրոնային կառավարումը նվազեցնում է կոռուպցիոն ռիսկերը և բարձրացնում աշխատանքային, ֆինանսական ու գործառնական կարգապահությունը:

2.6. Արդյունավետ գործում է 2016թ. ընթացքում ամբողջովին փոփոխված www.aspu.am ՎԵԲ-կայքը՝ իր ֆեյսբուքյան գլխավոր և հարակից էջերով, ուղեկցող բլոգերով:

Կայքը Եվրասիական տարածաշրջանի մանկավարժական և այլ բուհերի Կայքերի մրցույթում 2017թ. դեկտեմբերի 1-ի որոշմամբ գրավել է 1-ին տեղը իր ռեսպոնսիվության բաղադրիչով:

Կայքն իր կառուցվածքով և բովանդակությամբ իրենից ներկայացնում է տեղեկատվական, աշխատանքային և վերահսկողական գործիք: Այն զարգացման քաղաքականության մեջ կոռուպցիոն ռիսկերի շարունակական բացահայտման ու կանխարգելման գործուն միջոց է, ապահովում է համալսարանի կառավարման թափանցիկությունը, հրապարակայնությունը, հաշվետվողականությունը և օրինականության ամրապնդումը**:** Այսպես, www.aspu.am ՎԵԲ-կայքում զետեղված նյութերը բավարար արդյունավետ միջոց են Համալսարանի աշխատակազմի, գիտակրթական կառույցների և գիտամանկավարժական կադրերի գործունեության վերաբերյալ Համալսարանի աշխատակիցների, ուսանողների և հանրության իրազեկվածությունը ապահովելու

[7] Տես՝ https://aspu.am/website/images/files/Elektronayin.pdf Համալսարանի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման էլեկտրոնային անցկացման կարգը հաստատելու մասին ՀՊՄՀ ռեկտորի 06.05.2016թ. թիվ 1650-Լ հրամանը:

համար: Իսկ կայքին կապված կամ ուղեկցող էջերը անկախ տեղեկատվական աղբյուրներ են, որոնք կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում յուրահատուկ մեխանիզմներ և ցուցիչներ են:

Արդյունավետ գործում է ՖԱՄԱ առաջին համալսարանական ռադիոն:

ՀՊՄՀ գործունեության թափանցիկությունն ապահովվում է նաև «Մանկավարժ» թերթի միջոցով:

Հաջողության բանաձև հաղորդաշարը ապահովում է համալսարանի կառավարման գործընթացներում թափանցիկության, հրապարակայնության, հաշվետվողականության և օրինականության ամրապնդումը:

2.7. Մեկնարկել և/կամ հաջողությամբ ընթանում են միջազգային համագործակցության մի շարք երկկողմ և բազմակողմ ծրագրեր[8]: Դա վկայում է Համալսարանի կառավարչական, վարչական, ֆինանսատնտեսական, կրթական, գիտական, սոցիալական և այլ ոլորտներում գործունեության որակի ապահովման միջազգայնորեն ընդունելի կանոնակարգերի և ընթացակարգերի համապատասխանության մասին:

ՌԴ, Լիտվայի, Գերմանիայի, Չեխիայի, Դանիայի, Շվեցիայի, Ֆրանսիայի, Ռումինիայի, ԱՄՆ-ի և այլ պետությունների բուհերի հետ կնքված բազմաթիվ միջբուհական և բազմակողմ պայմանագրերով Համալսարանը հնարավորություն է ստացել փորձի փոխանակմամբ և համագործակցության այլ եղանակներով ապահովել բուհի միջազգայնացման գործընթացը՝ համապատասխան ստանդարտների պահպանմանը: Դա նպաստում է նաև նոր միջավայրի ձևավորմանը:

2.8. ՀՊՄՀ ռեկտորատի քննարկման է ներկայացվել ՀՊՄՀ ուսանողների բավարարվածությունը կրթական ծրագրերից հարցման արդյունքները, ՀՊՄՀ ուսանողների ,,Դասախոսը ուսանողի աչքերով,, հարցման արդյունքները, ՀՊՄՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի վարկանիշավորման ընթացքը, արդյունքները:

2.9. Վերանայվել է առկա ուսուցմամբ բակալավրի պատրաստման կրթական ծրագրերի ցանկը՝ հաշվի առնելով դրանց արդիականությունը և ուսանողների նախասիրությունները, շարունակվել է աշխատանքը ուսումնական դասընթացների ելքային կրթական արդյունքների սահմանման ուղղությամբ՝ չափելի գիտելիքների, կարողությունների և հմտությունների տեսքով: Շարունակվել են պարբերաբար կազմակերպվող հանդիպումները դեկանատների, ամբիոնների մասնագետների հետ՝ նրանց մեթոդական աջակցություն ցուցաբերելու նպատակով:

2.10. Քննաշրջաններին նախորդող ժամանակահատվածներում ուսանողների և դասախոսների շրջանում շարունակվել են բացատրական-մեկնաբանման աշխատանքները քննությունների անցկացման ընթացակարգերի, ուսանողների պարտականությունների և իրավունքների վերաբերյալ: Կազմակերպվել և իրականացվել է ավարտական որակավորման քննությունների և դրանց ելքային արդյունքների վերահսկման հաշվետվողության և ընթացքը:

Նպատակ 3. *Զգալիորեն բարելավել սոցիալական արդարության ընկալումը՝ ա/ Համալսարանի կառավարման գործընթացում դասախոսական համակազմի ներգրավվածություն, բ/ ուսումնառողների ներգրավվածությունը կառավարման գործընթացներին, գ/*

[8] https://www.aspu.am/hy/page/mijazgayin_hamagortsakcutyan_bazhin/

<u>վարչակառավարչական ապարատի թափանցիկ գործունեություն, դ/ կրթության որակի ապահովման թափանցիկ գործունեություն:</u>

3.1. անվանի անձանց (գիտնականների, հրապարակախոսների, գրողների, հասարակական, քաղաքական, տնտեսության, մշակույթի ոլորտի գործիչների) հետ հանդիպումները, կլոր սեղանները, դասախոսությունները նպաստում են ՊԴԱ և ուսանողների սոցիալական արդարության ընկալմանը, սերմանելով իրավաչափ վարքագծի բարձր կուլտուրա, անհանդուրժողականության մթնոլորտ կոռուպցիոն երևույթների նկատմամբ, նման երևույթների դեմ պայքարելու գիտելիքներ, հմտություններ և կարողություններ:

Համալսարանում այդպիսի հանդիպումները կրում են պարբերական բնույթ և առանձնանում են արդարության ու համամարդկային այլ բարձր արժեքների սերմանմամբ:

3.2. Հակակոռուպցիոն ծրագրի շրջանակում հատկապես կարևորվում է ինքնակառավարման մարմինների՝ ուսանողական խորհրդի, ուսանողական գիտական ընկերության և արհմիութենական կազմակերպության դերն ու նշանակությունը: Այդ կառույցների հետևողական գործունեությունն ապահովում է համալսարանի կառավարման թափանցիկությունը, հրապարակայնությունը, հաշվետվողականությունը և օրինականության ամրապնդումը:

3.3.Համալսարանում իրականացվել են հակակոռուպցիոն ընթացիկ այլ միջոցառումներ /ընդհանուր ժողովներ ՊԴԱ հետ, հանդիպումներ ուսանողների հետ տարբեր մակարդակներում և ձևաչափերով, աշխատանքային կարգապահության վերահսկման էլեկտրոնային միջոցների կիրառում, դրական աշխատանքի խրախուսման միջոցներ, անհանդուրժողականություն վաքագծի էտիկայի խախտումների նկատմամբ, սոցիոլոգիական հարցումներ, այդ թվում ռանդամինացված և այլ/: Շարունակվել է Համալսարանի Հենակետային վարժարանի և հիմնական դպրոցի զարգացման 2014-2018թթ. ռազմավարական ծրագիրի իրականացումը, որը պարբերաբար քննարկվել է Համալսարանի կառավարման բոլոր մակարդակներում և վերաբերելի կառույցներում:

Նպատակ 4. *Ամրապնդել բուհի մրցունակությունը և գրավչությունը ներդրումների համար կրթության և գիտության ոլորտների ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկայում:* Գործողությունները նկարագրված են 2.4., 2.6., 2.7., 3.1. կետերում:

Այսպիսով Համալսարանը հակակոռուպցիոն Ծրագիրն իրականացնելիս ստեղծել է այնպիսի միջավայր, որում կոռուպցիոն ռիսկերի էական կրճատմամբ նշանակալիորեն սահմանափակվում են հնարավոր կոռուպցիոն երևույթները:

Խաչատուր Աբովյանի անվան հայկական
պետական մանկավարժական
համալսարանի ռեկտոր, պրոֆեսոր **Ռուբեն Միրզախանյան**

14.12.2017

(2017թ., 25 դեկտեմբերի, ներկայացվել է ՀՊՄՀ Հիմնադրամի
հոգաբարձուների խորհրդի քննարկմանը)

ԾՐԱԳԻՐ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի 2018թ. հակակոռուպցիոն ռազմավարության

(նպատակները, խնդիրները, իրագործման ուղղությունները, ուղիները և պլանը)

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարը (այսուհետ՝ Համալսարան), ղեկավարվելով ՀՀ սահմանադրությամբ, ՀՀ օրենքներով, ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի <<Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2015-2018 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին>> N1141-Ն որոշմամբ, այլ իրավական ակտերով, ներառյալ՝ Համալսարանի կանոնադրությամբ և ռազմավարական ծրագրով, նախատեսում է 2018թ. ընթացքում հետևողականորեն շարունակել հակակոռուպցիոն գործունեությունը:

Նախադրյալներ. որպես հակակոռուպցիոն քաղաքականության իրականացման նախադրյալներ հանդես են գալիս՝ Համալսարանի կառավարման մարմինների կամքը, որոնք լիովին գիտակցում են կոռուպցիայից զերծ միջավայր ունենալու կարևորությունը, հանրային շահի առաջնայնությունը[9], բարեխղճությունը[10], թափանցիկությունը[11]:

Սկզբունքներ. Համալսարանի կառավարման ժամանակակից և արդյունավետ համակարգի ձևավորման համար Հայեցակարգի իրականացումը հիմնված են հետևյալ սկզբունքների վրա.

- իրավունքի գերակայություն[12], պատասխանատվություն[13], կոռուպցիոն ռիսկերի գնահատում և կառավարում[14], հակակոռուպցիոն ընթացակարգերի մշակման և իրացման

---

[9] Հանրային շահի առաջնայնություն՝ Համալսարանի իրավասու մարմինները իրենց լիազորություններն իրականացնելիս պարտավոր են հանրային շահը բարձր դասել ցանկացած այլ շահից:

[10] Բարեխղճություն՝ համալսարանի աշխատակիցները պարտավոր են իրենց գործունեությունն իրականացնել պատշաճ մակարդակով, որը համապատասխանում է Համալսարանի իրավասու մարմինների կողմից որոշված և սահմանված կարգերին, որակի չափանիշներին և չափորոշիչներին ու ժամկետներին:

[11] Թափանցիկություն՝ Համալսարանի իրավասու մարմինների հանրային ինստիտուտների ներկայացուցիչներն ապահովում են հանրային շահին առնչվող տեղեկատվության մատչելիությունը, որոշումների կայացման գործընթացի թափանցիկությունը և այդ գործընթացում հասարակության մասնակցությունը:

[12] Իրավունքի գերակայության սկզբունք՝ բոլորը հավասար են օրենքի առջև և հավասարապես պաշտպանվում են օրենքով, հարգանքը մարդու իրավունքների ու ազատությունների հանդեպ, ինչպես նաև պատասխանատվության անխուսափելիության սկզբունքի հետևողական իրագործումը:

[13] Պատասխանատվության սկզբունք՝ Համալսարանի իրավասու մարմինները պատասխանատու են Ռազմավարությունից բխող միջոցառումների իրականացման և դրանց արդյունավետության ապահովման համար,

[14] Կոռուպցիոն ռիսկերի գնահատման և կառավարման սկզբունք՝ Համալսարանի կառավարման և այլ հանրային յուրաքանչյուր ինստիտուտ պետք է ունակ լինի իր կողմից իրականացվող կառավարման գործընթացում կանխատեսել կոռուպցիոն հնարավոր ռիսկերը և համարժեքորեն նվազեցնել դրանք:

համաչափություն[15], հաշվետվողականություն[16], կոռուպցիոն իրավախախտումների կանխարգելում. համագործակցություն և համաձայնեցում[17]:

Համալսարանում 2018թ. հակակոռուպցիոն գործունեության իրականացման Ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) շարունակական գործընթացի իրականացման փաստաթուղթ է: Ծրագիրը ներառում է նպատակները, խնդիրները, իրագործման ուղղությունները, ուղիները և պլանը նպատակաուղղված է՝

ա/ կոռուպցիոն ռիսկերի էական կրճատմամբ դրա տարածվածության աստիճանը նշանակալիորեն սահմանափակելուն,

բ/ Համալսարանում մատուցվող հանրային ծառայությունների որակը բարձրացնելուն,

գ/ սոցիալական արդարության ընկալումը զգալիորեն բարելավելուն,

դ/ կրթության և գիտության ոլորտներում ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկայում բուհի մրցունակությունը և գրավչությունը ամրապնդելուն:

Այդ նպատակներով, և հիմք ընդունելով բուհի առաքելությունից, զարգացման ծրագրերից, բնութագրերից և հեռապատկերից բխող հակակոռուպցիոն գործողությունների արդիականացման անհրաժեշտությունը, սույնով սահմանվում է Համալսարանի 2018թ. Հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրագործման միջոցառումների ծրագիրը:

Առկա վիճակ. Համալսարանի կառավարման համակարգը 2017թ. ընթացքում ապահովել է բուհի ֆինանսական կայունությունը, երաշխավորել է նախկինում ընդունված զարգացման ծրագրերի իրականացումը:

Անցած տարիներին Համալսարանի հակակոռուպցիոն գործունեության կատարելագործմանն ուղղված հիմնական ուղղությունները եղել են կրթական չափորոշիչների կատարելագործումը, կրթական և ուսումնական ծրագրեր արդիականացումը, գիտական գործունեության զարգացումը, միջազգային համագործակցության զարգացումը, դիմորդների հավաքագրումը և ընդունելությունը, ֆինանսների կառավարումը, նյութատեխնիկական բազայի պահպանությունն ու զարգացումը և Համալսարանի ենթակառուցվածքների բարելավումը:

Անցյալ տարիների ընթացքում Համալսարանի հակակոռուպցիոն քաղաքականությունը իրականացվել է ինտենսիվ տեմպերով և բավարար արդյունավետությամբ (տես՝ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2009-2012թթ., ինչպես նաև 2013թ., 2014թ., 2015թ., 2016թ. և 2017թ. միջոցառումների ծրագրերի Հաշվետվությունները):

---

[15] Հակակոռուպցիոն ընթացակարգերի մշակման և իրացման համաչափություն՝ Համալսարանի կառավարման և այլ հանրային ինստիտուտները պետք է մշակեն, ներդնեն և իրականացնեն այնպիսի հուսալի ընթացակարգեր, որոնք համաչափ կլինեն Համալսարանի ինստիտուցիոնալ ռիսկերին և խոցելիությանը, ինչպես նաև կհամապատասխանեն Համալսարանի ռեսուրսներին և կազմակերպական առանձնահատկություններին:

[16] Հաշվետվողականություն՝ հակակոռուպցիոն քաղաքականության արդյունավետությունը պահանջում է կոռուպցիայի բացարձակ անհանդուրժողականության մթնոլորտ:

[17] Կոռուպցիոն իրավախախտումների կանխարգելում. համագործակցություն և համաձայնեցում՝ Համալսարանի կառավարման և այլ հանրային ինստիտուտները պետք է սերտորեն համագործակցեն՝ ապահովելով հակակոռուպցիոն նպատակների համատեղ իրականացումը:

Մարտահրավերներ. Հակակոռուպցիոն սույն ռազմավարության մշակման ընթացքում հաշվի են առնվել Համալսարանի կառավարման կառուցվածքը Համալսարանի ռազմավարական նպատակներին, ինչպես նաև արտաքին միջավայրին և դրա արագ փոփոխությանը մշտապես համապատասխանեցնելու գործոնը: Որպես ներքին գործոններ են դիտվել և դիտվում Համալսարանի կառավարման գործընթացում նորարական գաղափարները իրականացնելիս պրոֆեսորադասախոսական և վարչական անձնակազմի ոչ լիարժեք պատրաստվածությունը և ներգրավվածությունը, Համալսարանի ընդհանուր տեղեկատվական բազայի մշտապես կատարելագործման խնդիրը, աշխատավարձի բարձրացման կամ խրախուսման այլ մեթոդների կիրառման խնդիրը:

Արտաքին և ներքին գործոններ. Հակակոռուպցիոն ռազմավարության մշակման և իրականացման ընթացքում հաշվի է առնվել Համալսարանի կառավարման կառուցվածքը արտաքին միջավայրին և դրա փոփոխությանը ու Համալսարանի ռազմավարական նպատակներին համապատասխանեցնելու անհրաժեշտությունը: Որպես ներքին գործոններ են դիտվել և դիտվում նաև Համալսարանի կառավարման գործընթացում նորարական գաղափարները իրականացնելիս պրոֆեսորադասախոսական և վարչական անձնակազմի ոչ լիարժեք պատրաստվածությունը և ներգրավվածությունը, Համալսարանի ընդհանուր տեղեկատվական բազայի ոչ բավարար մակարդակը, աշխատավարձի բարձրացման կամ խրախուսման այլ մեթոդների կիրառման խնդիրը:

Խնդիրներ՝

ա/ կատարելագործել Համալսարանի կառավարման համակարգը՝ Համալսարանի դինամիկ զարգացման նպատակով,

բ/ ապահովել Համալսարանի կառավարման գործընթացում բոլոր դերակատարների անձնական պատասխանատվությունը,

գ/ աջակցել կառավարման նոր մեթոդների ներդրմանը,

դ/ շարունակել ապահովել վարչակառավարչական ապարատի գործունեության վերաբերյալ Համալսարանի աշխատակիցների և հանրության իրազեկվածությունը,

ե/ շարունակել ներդնել Համալսարանի ուսումնական գործընթացներում միջազգայնորեն ճանաչված կառավարման էլեկտրոնային համակարգեր,

զ/ բարձրացնել ֆինանսական միջոցների կառավարման արդյունավետությունը,

Հիմնական մեթոդներ. Համալսարանի հակակոռուպցիոն ծրագրի իրականացման հիմնական մեթոդներ են զարգացման քաղաքականության մեջ կոռուպցիոն ռիսկերի շարունակական բացահայտումն ու կանխարգելումը նհամալսարանի կառավարման թափանցիկության, հրապարակայնության, հաշվետվողականության և օրինականության ամրապնդումը:

Հակակոռուպցիոն ռազմավարության հիմնական ուղղություններ՝

-Համալսարանի ներքին և արտաքին միջավայրի իրավաչափ փոխգործակցության ապահովումը,

-վարչական աշխատակազմի լիազորությունների և պատասխանատվությունների հստակ բաշխումը,

-կառավարման կազմակերպական կառուցվածքի կատարելագործումը[18]՝

-կառավարման արդյունավետության ապահովման համար հանրային կառույցների իրական մասնակցություն[19],

-Համալսարանի աշխատակիցներին կառավարչական որոշումների հասանելիության ապահովում[20],

-կոռուպցիոն երևույթների բացահայտում[21],

-կառավարման նորարարական տեխնոլոգիաների ներդրման պայմանների ստեղծումը և ներդրումը:

<u>Ակնկալվող արդյունքներ</u> ՝

-արդի պահանջներին համապատասխան՝ կառավարման որակյալ համակարգ,

-Համալսարանի ստորաբաժանումների և ֆակուլտետների մակարդակով իրականացվող ծրագրերի արդյունավետ իրականացում,

-իրականացվող ծրագրերի ղեկավարման բարձր արդյունավետություն,

-կառավարման վերակազմավորված կազմակերպական կառուցվածք, որը կհամապատասխանի արտաքին և ներքին պահանջներին,

-կառավարման գործընթացում ընդգրկված աշխատակազմի գործունեության քանակաորակական համադրության ապահովում,

-կառավարման ժամանակակից մեթոդներին տիրապետող վարչակառավարչական անձնակազմ,

-Համալսարանի կառավարման գործընթացում արտաքին շահակիցների ներգրավվածություն,

-Համալսարանի կառավարման գործընթացում դասախոսական համակազմի ներգրավվածություն,

-ուսումնառողների ներգրավվածությունը կառավարման գործընթացներին,

-վարչակառավարչական ապարատի թափանցիկ գործունեություն,

---

[18] Կառավարման կազմակերպական կառուցվածքի կատարելագործում՝ գործառույթների, ռեսուրսների և կադրերի վերանայման անհրաժեշտության տեսանկյունից, դրանց համապատասխանեցումը կառավարման ապարատի գործունեության ընթացակարգերին և կանոնակարգերին՝ ելնելով աշխատանքային ծավալներից:

[19] որը նպատակաուղղված է Համալսարանի աշխատակիցների ակտիվ ներգրավմամբ կառավարման գործընթացում ակադեմիական ինքնակառավարման դերի բարձրացմանը, ուսանողության ինքնավարության ապահովմանը, Համալսարանի անձնակազմի և ուսանողության միջև փոխադարձ հարգանքի և վստահության ամրապնդմանը,

[20] Ենթադրում է կառավարման գործունեության թափանցիկության ապահովում, Համալսարանի գործունեության տարեկան հաշվետվությունների հրատարակում, Համալսարանի կայքում արտաքին և ներքին աուդիտի և որակի ապահովման մշտադիտարկման արդյունքների տեղադրում, տեղեկատվական ռեսուրսների վիճակի ուսումնասիրում, հետագա զարգացման առաջնահերթ ուղղությունների որոշում, կրթական գործունեությունում էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրում,

[21] Կոռուպցիոն երևույթների բացահայտումն իրականացվում է սոցիոլոգիական հարցումների, նպատակային հետազոտությունների անցկացման միջոցով, ինչպես նաև կոռուպցիոն ռիսկերի նվազեցման այլ ուղիների որոնում (ուսանողների գիտելիքների գնահատման թափանցիկության ապահովում, գնահատման ընթացակարգերի վերաբերյալ ուսանողների իրազեկվածություն, Ֆակուլտետի գործունեության հրապարակայնացում և վերահսկողության բարձրացում):

-կրթության որակի ապահովման թափանցիկ գործունեություն,

-Համալսարանի կայուն ֆինանսական գործունեություն:

<u>Առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշներ</u> ՝

- զարգացման ծրագրում Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների մասնակցության աճը,
- համալսարանի կազմակերպչական կառուցվածքում նորացված ստորաբաժանումների քանակը,
- համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների գործունեությունը կարգավորող ընթացակարգերի, կանոնակարգերի և այլ անհրաժեշտ փաստաթղթերի առկայությունը,
- կառավարման ժամանակակից տեխնոլոգիաներին տիրապետող անձնակազմի տոկոսը,
- ֆինանսական միջոցների օգտագործման նպատակայնությունը և արդյունավետությունը,
- աշխատակազմի և ուսանողների քանակը, որոնք ներգրավված են հասարակական և մասնագիտական խորհուրդներում, ինքնակառավարվող մարմիններում,
- համալսարանի գործունեությունից արտաքին շահակիցների բավարարվածության աստիճանը,
- աշխատակիցների և ուսանողների բավարարվածության աստիճանը Համալսարանի ղեկավարման գործընթացից,
- դասավանդման էլեկտրոնային եղանակների առկայություն,
- գործավարական փաստաթղթերի նոր ձևաչափերի կիրառում,
- համալսարանի նոր կայքի ստեղծում և ներդրում, կայքի և ՖԱՄԱ առաջին համալսարանական ռադիոյի այցելուների թվի աճ, լրատվության ընդլայնում,
- համալսարանի ընդհանուր բյուջեում արտաբյուջետային միջոցների ծավալ,
- կոռուպցիայի բացահայտման նպատակով սոցիոլոգիական հարցումների, ռսումնասիրությունների արդյունքները:

Խաչատուր Աբովյանի անվան հայկական
պետական մանկավարժական
համալսարանի ռեկտոր, պրոֆեսոր **Ռուբեն Միրզախանյան**

(2017թ., 25 դեկտեմբերի, ներկայացվել է ՀՊՄՀ Հիմնադրամի
հոգաբարձուների խորհրդի քննարկմանը)

Միջոցառումների պլան
Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի 2018թ. հակակոռուպցիոն ռազմավարության

Նպատակ	***Միջոց***	***Ակնկալվող արդյունք***	***Պատասխանատու***	***Ժամկետ***
Նպատակ 1. Բարձրացնել Համալսարանում մատուց վող հանրային ծառայու թյունների որակը	ա/ Ուսանողների գիտելիքների գնահատման թափանցիկության ապահովում, գնահատման ընթացակարգերի վերաբերյալ ուսանողների իրազեկվածություն բ/ Ֆակուլտետի գործունեության հրապարակայնացում և վերահսկողության բարձրացում՝ որպես կոռուպցիայի դեմ պայքարի միջոց:	Կոռուպցիայի ռիսկերի նվազեցված մակարդակ Կոռուպցիայի ռիսկերի նվազեցված մակարդակ	Պրոռեկտորներ Դեկաններ Ստորաբաժանումներ ի ղեկավարներ Ուս.խորհուրդ Արհմիութ.կազմակ	Պարբերա բար
Նպատակ 2. Կոռուպցիոն ռիսկերի էական կրճատմամբ նշանակալիորեն սահմանա փակել դրա տարածվածությա ն աստիճանը,	ա/ կոռուպցիոն ռիսկերի նվազեցման ուղիների որոնում բ/ կոռուպցիոն երևույթների բացահայտում սոցիոլոգիական հարցումների, նպատակային հետազոտությունների անցկացման միջոցով	Իրականացված հակակոռուպ ցիոն միջոցառում ներ Կոռուպցիայի ռիսկերի նվազեցված մակարդակ	Պրոռեկտորներ Դեկաններ Ստորաբաժա նումների ղեկավարներ Ուս.խորհուրդ Արհմիութ.կազմակ	Պարբերա բար
Նպատակ 3.	ա/ Համալսարանի	Կոռուպցիայի	Պրոռեկտորներ	Պարբերա

զգալիորեն բարելավել սոցիալական արդարության ընկալումը	կառավարման գործընթացում դասախոսական համակազմի ներգրավվածություն, բ/ ուսումնառողների ներգրավվածությունը կառավարման գործընթացներին, գ/վարչակառավարչական ապարատի թափանցիկ գործունեություն, դ/ կրթության որակի ապահովման թափանցիկ գործունեություն,	ռիսկերի նվազեցված մակարդակ	Դեկաններ Ստորաբաժանումների ղեկավարներ Ուս.խորհուրդ Արհմիութ.կազմակ	բար
Նպատակ 4. ամրապնդել բուհի մրցունակությունը և գրավչությունը ներդրումների համար կրթության և գիտության ոլորտների ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկայում:	ա/համալսարանի կայքի և ՖԱՄԱ առաջին համալսարանական ռադիոյի այցելուների թվի աճ, լրատվության ընդլայնում, բ/ դասավանդման էլեկտրոնային եղանակների առկայություն, գ/ համալսարանի ընդհանուր բյուջեում արտաբյուջետային միջոցների ծավալ	Կոռուպցիայի ռիսկերի նվազեցված մակարդակ	Պրոռեկտորներ Դեկաններ Ստորաբաժանումների ղեկավարներ Ուս.խորհուրդ Արհմիութ.կազմակ	Պարբերաբար